02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

25 (1424) • 12 հուլիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ընդունելություն ոստիկանությունում

Հուլիսի 9-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց ոստիկանության պետերի միջազգային ասոցիացիայի ղեկավար Փոլ Սելին, ասոցիացիայի գործադիր տնօրեն Վինս Հոուքսին եւ պատվավոր գործընկեր, Global Policing Initiative-ի տնօրեն Մեթյու Թորիգիանին: Ողջունելով հյուրերին՝ նա ներկայացրեց վերջին տարում Հայաստանի ոստիկանությունում ընթացող բարեփոխումները՝ ընդգծելով, որ նախեւառաջ խնդիր է դրվել արմատախիլ անել կոռուպցիայի համակարգային դրսեւորումները:

Նշվեց, որ փոփոխություններ են կատարվել ստորաբաժանումների աշխատանքում: Մասնավորապես, տարիներ շարունակ հանրային գիտակցության մեջ հատուկ միջոցներ կիրառող ստորաբաժանում ընկալվող ոստիկանության զորքերն այսօր սահմանապահ գործառույթ է կատարում եւ իրականացնում մարտական հերթապահություն: Ճանապարհային ոստիկանության ոլորտում քայլերն ուղղված են համակարգային փոփոխություններին, որոնց նպատակը երթեւեկության անվտանգության ապահովումն ու պատահարների նվազեցումն է: Ակտիվ աշխատանքներ են տարվում պարեկային ծառայության կայացման ուղղությամբ, ուսումնասիրվում է տարբեր երկրների առաջավոր փորձը: Միջոցներ են ձեռնարկվում համայնքային ոստիկանության ինստիտուտի ամրապնդման ու կատարելագործման համար:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Փոլ Սելը ներկայացրեց աշխարհի 164 երկրներում ներկայացուցչություններ ունեցող ոստիկանության պետերի միջազգային ասոցիացիայի գործառույթներն ու խնդիրները:

Վալերիյ Օսիպյանը նշեց, որ մեր երկրում այսօր աննախադեպ հանրային վստահություն կա ոստիկանության հանդեպ, որն ամրապնդելու եւ անշրջելի դարձնելու առումով կարեւորվում է միջազգային գործընկերների հետ համագործակցության խորացումն ու փորձի փոխանակումը:

Հայաստանի ոստիկանության աշխատանքի արդյունավետության համատեքստում Փոլ Սելը նշեց անվտանգության բարձր մակարդակը մայրաքաղաքում՝ դրական գնահատելով զբոսաշրջիկների մեծ թվի պայմաններում ոստիկանության արդյունավետ գործունեությունն ու հյուրերի անվտանգության ապահովման աստիճանը: Նաեւ հավելեց, որ ասոցիացիայի խնդիրը համագործակցության ընդլայնման նպատակով բոլոր երկրներում ներկայացուցչություններ ունենալն ու կազմակերպության շուրջ 30 հազար անդամների, մասնագետների ներուժի համատեղ ու արդյունավետ կիրառումն է կիբերհանցավորության, ահաբեկչության դեմ պայքարի, ճանապարհային երթեւեկության անվտանգության բարձրացման եւ այլ ոլորտներում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Տարվա լավագույն ստորաբաժանումը

2018 թվականի լավագույն ստորաբաժանում է ճանաչվել ոստիկանության Կումայրիի բաժինը, որը սպասարկում է շուրջ 75 հազար բնակչի:

Անցած տարի բաժնի հերթապահ մասում գրանցվել է հանցագործությունների, վարչական իրավախախտումների եւ պատահարների վերաբերյալ 2139 հաղորդում. բոլորին տրվել է համապատասխան ընթացք:

Ստորաբաժանման քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողների շուրջօրյա ծառայության շնորհիվ անցած տարի բացահայտվել է 300 հանցագործության դեպք, հայտնաբերվել են բազմաթիվ հետախուզվողներ: Հայտնաբերվել կամ կամավոր ներկայացվել է զենք-զինամթերք: Հետեւողական պայքար է մղվել թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ:

էջ 3

Ծառայություն՝ հանուն անվտանգ երթեւեկության

Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ծառայողները հուլիսի 1-ից 7-ը ուժեղացված ծառայություն են իրականացրել մայրաքաղաքում, որի ընթացքում պահպանվող հատուկ տարածք է տեղափոխվել 159 տրանսպորտային միջոց: Դրանցից 17-ի վարորդները ալկոհոլի ազդեցության տակ են եղել, երկու մեքենայի վրա, առանց համապատասխան թույլտվության, տեղադրված է եղել հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորում, մյուսների վարորդները կա՛մ չեն ունեցել համապատասխան փաստաթղթեր, կա՛մ թույլ են տվել ճանապարհային երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ՝ վտանգելով երթեւեկության մյուս մասնակիցների կյանքն ու առողջությունը:

Հուլիսի 1-ից 7-ը մարզերում ուժեղացված ծառայություն են իրականացրել ճանապարհային ոստիկանության երկրորդ սպայական գումարտակի ծառայողները: Նրանք պահպանվող հատուկ տարածք են տեղափոխել 97 տրանսպորտային միջոց: 63 վարորդ մեքենան վարել է ոչ սթափ վիճակում:

Անվտանգ երթեւեկությանն ուղղված ուժեղացված ծառայությունները շարունակվում են:

Ոստիկանները բացահայտեցին սպանությունը

Հուլիսի 9-ին, ժամը 21.10-ին, հիվանդանոցից ոստիկանության Դիլիջանի բաժին հաղորդում էր ստացվել, որ իրենց մոտ է տեղափոխվել 26-ամյա Գուրգեն Ղալեչյանի դին:

Ոստիկանության Տավուշի մարզային վարչության, մարզի դատախազության եւ քննչական ստորաբաժանման ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական ու քննչական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ Դիլիջանի Հակոբջանյան փողոցում սպանությունը կատարել է նույն փողոցի բնակիչ, 27-ամյա մի երիտասարդ: Նա նաեւ մարմնական վնասվածքներ էր պատճառել մեկ այլ քաղաքացու:

Ոստիկանության Դիլիջանի բաժնի ծառայողների ձեռնարկած բացատրական աշխատանքի արդյունքում կասկածյալը ներկայացավ ոստիկանություն եւ խոստովանեց կատարածը:

Սպանության հատկանիշներով քրեական գործ է հարուցվել:

Կասկածյալը կալանավորվել է:

Դանակահարությունը բացահայտվեց

Հունիսի 29-ին հիվանդանոցից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ որովայնի ծակած-կտրած վերքով բուժօգնության է տեղափոխվել 55-ամյա մի տղամարդ:

Հիվանդանոց մեկնեց ոստիկանության օպերատիվ խումբը, սակայն տեղափոխվածն ի վիճակի չէր բացատրություն տալու:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումներով հանցագործությունը բացահայտվեց: Պարզվեց, որ հունիսի 28-ին, ժամը 22.30-ի սահմաններում, մայրաքաղաքի Արամի փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Գյումրիի մի բնակիչ դանակահարել էր տղամարդուն:

Կասկածյալը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին:

Կատարվում է քննություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցման՝ 2019/2020 ուստարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության բակալավրի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Շորթողը՝ համացանցից

Նշված վայրում կնոջ թողած ծխախոտի տուփը, որի մեջ 1000 դոլար էր, վերցնելուց անմիջապես հետո եռյակը մերկացվեց: էջ 2

Վայրագ պատմություններ

Ողջ մնացած երեխաներին ուղարկեցին գիշերօթիկ դպրոց, իսկ մայրը տեղափոխվեց հոգեբուժական հիվանդանոց: էջ 5

Որջի «բնակիչները»

Կալանավայրից հետո զավակներին հանձնեց մանկատուն եւ սկսեց զբաղվել մարմնավաճառությամբ: էջ 7

Շորթողը՝ համացանցից

Հանցագործության տեսակներն ունեն յուրահատկություններ, դրանք ճանաչել է պետք՝ դրանց դեմ պայքարելու համար: Օրինակ՝ խարդախությունը, շորթումը ամենադժվար ապացուցվող հանցատեսակներից են: Այսպես կհաստատի պրակտիկ իրավապահը: Առանձին դեպքերի ծանոթանալիս անկեղծ զգացողություն ես ունենում, որ եթե լսեիր այդ պատմությունն ուրիշից, գուցե թերահավատորեն վերաբերվեիր՝ կարծելով, թե մտացածին է, կամ առնվազն չափազանցված: Ոստիկանության օպերատիվ ամփոփագրերում, սակայն, դրանք իրական են:

Ոստիկանություն ԿՀԴՊ գլխավոր վարչություն դիմած երիտասարդ կինը հայտնում էր. «Օդնոկլասնիկի.ռու» կայքում գրանցված ոմն Սկո անձնական նամակագրության միջոցով իրենից պահանջում է 2000 դոլար՝ սպառնալով պահանջը չկատարելու դեպքում արատավորող տեղեկություններ տարածել նույն կայքում եւ իր բարեկամական շրջապատում:

Այո, համացանցն այսօր մեր առօրյայի անբաժանելի մասն է, ու ոստիկանությունը չի էլ թաքցնում, որ վերահսկում է նաեւ վիրտուալ կյանքի շարժընթացը: Բազմաթիվ են դեպքերը, երբ այս տիրույթում պլանավորվող հանցագործությունները կանխվում են դեռ չսկսած: Իհարկե, առավել տպավորիչ է, երբ դրանք մերկացվում են հընթացս:

ԿՀԴՊ գլխավոր վարչության աշխատակիցները տուժածից ստացած տեղեկատվությունը վերլուծելով՝ որոշակիացրին, որ դրամաշորթն արդեն պատրաստվում է իր գործողությունները տեղափոխել շոշափելի հարթություն:

Երիտասարդ կինը ոստիկանների հսկողությամբ շարունակեց նամակագրությունը: Համաձայնեց նրա պահանջին:

Սակայն իրեն շանտաժի ենթարկողներին ասաց, որ ընդամենը 1000 դոլար է կարողացել հայթայթել: Դրամաշորթն, իհարկե, ոգեւորվեց. կարեւորը, որ զոհը տեղի էր տվել, ու թելադրեց դրամի փոխանցման եղանակը: Կինը պիտի դրամը դներ ծխախոտի տուփի մեջ ու թողներ պայմանավորված տեղում: Մի առանձին սպառնալիք էլ էր ստացել: Հետը, այսպես ասած, «պոչ» չպիտի բերեր, հակառակ դեպքում ամեն ինչ գլխիվայր շուռ կգար:

Մշակվեց օպերատիվ միջոցառման ծրագիր: Այսպես ասած՝ մերկացում՝ հանցանքը կատարելու պահին:

Օպերատիվ աշխատակիցների մի քանի խմբեր պայմանավորված վայրում դեռ հանդիպումից ժամեր առաջ գաղտնի ծառայություն էին սկսել: Օպերատիվ տեսադաշտում էին բոլոր կասկածելի վարքով անձինք, ավտոմեքենաները, ընդհանրապես՝ յուրաքանչյուր շարժ: Ավելին, ամեն ինչ գաղտնի տեսագրվում էր տեսախցիկներով: Զոհի՝ սահմանված վայրում հայտնվելու պահից իրավիճակը լարվեց: Չմանրամասնելով բուն գործողությունը՝ միայն ասենք, որ հաշված րոպեների ընթացքում արդեն օպերատիվ աշխատակիցների տեսադաշտում էին մի երիտասարդ կին ու երկու տղամարդ: Այո, ինչպես հասկացաք, գործում էր խումբ:

Նշված վայրում կնոջ թողած ծխախոտի տուփը, որի մեջ 1000 դոլար էր, վերցնելուց անմիջապես հետո եռյակը մերկացվեց: Երեքն էլ, «Մերսեդես»-ով հանդերձ, տեղափոխվեցին ոստիկանություն: Հենց մեքենայի միջից էլ հայտնաբերվեցին եւ առգրավվեցին նախապես քիմիական մշակման ենթարկված դոլարները:

Պարզվեց, որ յուրաքանչյուրն իր ուրույն դերակատարությունն էր ունեցել: Օրինակ, քառասնամյա Նորիկ Քոչարյանը հետեւել էր զոհի տեղաշարժին: Իր այդ «օպերատիվ-հետախուզական» ծառայության համար ակնկալում էր գործընկերներից ստանալ, իր ասելով, 10 000 դրամ: Իսկ հանցավոր մտահղացման հեղինակային իրավունքը մյուս երկուսինն էր՝ քսանվեց տարեկան Մարիամ Հարությունյանինը եւ երեսունութ տարեկան Արտակ Հարությունյանինը:

Հարուցվել է քրեական գործ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հենրիկ ԴԱԶԱՐՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Հենրիկ Դազարյանը

Ծնվել է 1945 թ., Շիրակի մարզի Գեղանիստ գյուղում:

1964-1967 թթ. բանակում ծառայությունից հետո մինչեւ 1975 թվականը աշխատել է Սպանդարյանի գյուղխորհրդում՝ որպես քարտուղար, նախագահ, այնուհետեւ՝ Արթիկի շրջխորհրդի պլանային հանձնաժողովի նախագահ: Աշխատանքին զուգահեռ սովորել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:

1975 թ. ծառայության է անցել ներքին գործերի համակարգում: Աշխատել է Արթիկի ՆԳ բաժնում՝ որպես տեսուչ, ավագ տեսուչ, բաժնի պետի տեղակալ, բաժնի պետ: 1992-1994 թթ. Շիրակի մարզային վարչության պետի տեղակալն էր:

Թոշակի է անցել 1996 թվականին:

Բարեխիղճ ծառայողի, սկզբունքային սպայի ու պատրաստակամ, վստահելի գործընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Թմրամիջոց իրացնողը հայտնաբերվեց

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ մայրաքաղաքի ակումբներից մեկում թմրամիջոց են իրացնում: Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների հետ ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝ Երեւանի Սարյան եւ Լեոյի փողոցների խաչմերուկից, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկվեցին երեք երիտասարդ: Նրանց անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց մարիխուանայի նմանվող զանգվածով 6 փաթեթ:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ երիտասարդները թմրամիջոցը ձեռք են բերել ակումբի բարմենից: 27-ամյա երիտասարդը եւս հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն: Նրա անձնական խուզարկությամբ նույնպես մարիխուանայի նմանվող զանգված հայտնաբերվեց: Դատարանի որոշմամբ խուզարկություն կատարվեց նաեւ բերման ենթարկվածի բնակարանում, եւ հայտնաբերվեցին կաթոցիչներ ու էլեկտրական կշեռքներ:

Քրեական գործ է հարուցվել:

Կատարվում է նախաքննություն:

Հայտնաբերվել է զինանոց

Հանցագործության կանխարգելման տեսանկյունից առանձնակի կարեւոր են բնակչության մոտ ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնմանն ու հայտնաբերմանն ուղղված միջոցառումները, որոնք ոստիկանության առանցքային գործառույթներից են:

Վարչական տարածքում ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողների պարբերաբար անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ հունիսի 26-ին մի քաղաքացի հայտնել էր, որ Նուբարաշենի կամրջի տակ իրեր է թողնում եւ խնդրել էր՝ ոստիկան մոտենա:

Մեկնած օպերատիվ խումբը կամրջի վերջին հենասյան մոտ՝ խոտածածկ տարածքում, հայտնաբերեց պոլիէթիլենային երեք պարկ եւ պայուսակ, որոնց մեջ երկու ինքնաձիգ, «ՏՕՋ» տիպի հրացան, յոթ նռնակ, նռնակի երկու պայթուցիչ, ինքնաձիգի դատարկ փամփշտատուփեր, տարբեր տրամաչափի մոտ 500 փամփուշտ եւ փամփուշտների մետաղյա փակ արկղեր էին:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Խուլիգանություն Օշականում

Հունիսի 25-ին ոստիկանության Աշտարակի բաժնում ահազանգ ստացվեց, որ Օշական գյուղում մի տղամարդ իր բեռնատարով փակել է գյուղի փողոցներից մեկը, կանգնել մեքենայի վրա եւ երկաթե ձողով խփում է տրանսպորտային միջոցի տարբեր մասերին, բնակիչների ներկայությամբ հայհոյում է:

Շուրջ մեկ ժամ նման վարքագիծ դրսեւորելով՝ այնուհետեւ մեքենայի երկաթե ամբարձիչը եւ մետաղյա ձողը նետել էր ոստիկանների ուղղությամբ ու ցատկել հարեւանությամբ գտնվող տան խորդանոցի տանիքին՝ փորձելով փախչել, բայց ոստիկանները նրան բռնել ու բերման էին ենթարկել Աշտարակի բաժին:

Օշականի բնակիչ, 31-ամյա տղամարդը օրերս իրականացված ուժեղացված ծառայությունների ընթացքում երկու անգամ վարչական պատասխանատվության էր ենթարկվել մեքենան ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու համար:

Խուլիգանության հատկանիշներով քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Խուլիգանություն հանգստյան գոտում

Հունիսի 30-ին ոստիկանության Դիլիջանի բաժին հաղորդում էր ստացվել, որ «Պարզ լիճ» հանգստյան գոտու տարածքում դանակահարություն է եղել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ հանգստյան գոտու տարածքում հանգստացող չորս երիտասարդ ցանկացել են լճում լողալ, սակայն ոստիկանները նրանց զգուշացրել են, որ լճում լողալն արգելված է: Նրանք չեն ենթարկվել, կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, անհարգալից վերաբերմունք ցուցաբերել հասարակության նկատմամբ: Այնուհետեւ դանակահարել են վեճին միջամտած 53-ամյա տղամարդուն, որը տեղափոխվել է հիվանդանոց:

Խուլիգանության կասկածանքով չորս անձ բերման է ենթարկվել ոստիկանության Դիլիջանի բաժին:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

www.police.am

Դրամապանակում 1000 դոլար էր

Ոստիկանություն զանգած քաղաքացուհին հայտնել էր, որ տանը նկատել էր դրամապանակի կորուստը:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները պարզեցին, որ քաղաքացուհու դրամապանակը գողացել են երթուղայինում: Դրամապանակում եղել էր 1000 դոլար:

Ոստիկանների տեսադաշտում հայտնվեց Ամիրյան փողոցի 31-ամյա մի բնակիչ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նա հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանություն, որտեղ էլ խոստովանեց կատարածը:

Փաստով նախապատրաստվում են նյութեր:

Խուլիգանություն Գնդեվազում

Հուլիսի 1-ին ոստիկանության Ջերմուկի բաժնում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ նախորդ օրը Գնդեվազ գյուղում տեղի էր ունեցել վիճաբանություն ու ծեծկռտուք, նաեւ վնասել էին մեքենա:

Պարզվեց, որ հունիսի 30-ին, ժամը 20-ի սահմաններում, տուժողը երթեւեկել է Գնդեվազի ուղղությամբ, որտեղ էլ ճանապարհը չզիջելու հարցի շուրջ ծագել է վիճաբանություն. յոթ հոգի հայհոյել էին նրան, ծեծել եւ վնասել մեքենան:

Հարուցվեց քրեական գործ՝ խուլիգանության հատկանիշներով:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ վիճաբանության բոլոր մասնակիցները հայտնաբերվեցին ու ներկայացվեցին նախաքննություն իրականացնող մարմնին:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Գողության եւ կողոպտի

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Սիլիկյան թաղամասից, գողություն կատարելու կասկածանքով, բերման էին ենթարկել Չուխաջյան փողոցի 27-ամյա մի բնակչի: Նա խոստովանեց, որ ապրիլին 16-րդ թաղամասում «Մերսեդես» մակնիշի մեքենայի կողային հայելիներն էր հափշտակել, նաեւ Աջափնյակ վարչական տարածքում կատարել էր տարբեր գողություններ: Այդ անգամ քաղաքացին ստորագրությամբ բաց էր թողնվել, ու, թվում էր, կատարվածից պետք է հետեւություններ աներ: Բայց հունիսի 24-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից ստացված ահազանգը հակառակը փաստեց:

Երեկոյան Մարգարյան փողոցում անհայտ անձը մի կնոջ պարանոցից ոսկյա շղթա էր հափշտակել: Ինչպես ժամեր անց պարզեցին քրեական հետախույզները, գողություններ կատարած նույն երիտասարդն էր: Ժամը 23-ի սահմաններում իրավապահները Հալաբյան փողոցից նրան կրկին բերման ենթարկեցին ոստիկանության Մաշտոցի բաժին:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Բացահայտում՝ ահազանգից առաջ

Հունիսի 25-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգ ստացվեց, որ կոտրելով Մոսկովյան փողոցում կայանված «Նիսան»-ի ապակին՝ սրահից գողացել են պայուսակ, որի մեջ եղել են փող, անձը հաստատող փաստաթղթեր, բանկային եւ կուտակային քարտեր:

Բայց մինչ ահազանգը արդեն գործողություններ էին ծավալվել: Ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողները ժամը 21-ին Մոսկովյան փողոցում ծառայություն իրականացնելիս «Նիսան»-ի մոտ նկատել էին կասկածելի երեք երիտասարդի, ապա տեսել էին, թե նրանցից մեկն ինչպես կոտրեց մեքենայի ապակին ու սրահից պայուսակ հափշտակեց: Ոստիկանները հետապնդել էին, բռնել նրանցից մեկին եւ բերման ենթարկել ոստիկանության Մարաշի բաժանմունք:

Չուխաջյան փողոցի 27-ամյա բնակիչը խոստովանական բացատրություն է տվել, որ մայիս-հունիս ամիսներին նույն եղանակով գողություններ է արել նաեւ Տերյան փողոցում կայանված երկու ավտոմեքենայից:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Տարվա լավագույն ստորաբաժանումը

Սկիզբը՝ էջ 1

«Ոստիկանության Կումայրիի բաժինը համալրված է պրոֆեսիոնալ անձնակազմով: Բաժնի ծառայողները 2018 թվականին բացահայտել են ոչ միայն նշված տարում կատարված հանցագործության դեպքեր, այլեւ նախկինում կատարված, հասարակական հնչողություն ունեցող, ծանր, առանձնապես ծանր հանցագործություններ: Բաժնի կողմից սպասարկվող վարչական տարածքում օպերատիվ իրավիճակը լիովին վերահսկվել ու վերահսկվում է»,- նշեց ոստիկանության Կումայրիի բաժնի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարեն Գեւորգյանը:

Ոչ պակաս ծանրաբեռնվածությամբ ու պատասխանատվությամբ են ծառայել նաեւ հետաքննության բաժանմունքի աշխատակիցները: Միայն 2018 թվականի ընթացքում նախապատրաստվել է 681 նյութ:

Համայնքային ոստիկանության բաժանմունքի ծառայողներն անցած տարի հասարակական կարգ են ապահովել ութսուն զանգվածային միջոցառման ընթացքում: Ոստիկանության Կումայրիի բաժնի բացահայտած հանցագործությունների 26 տոկոսը համայնքային ոստիկանների աշխատանքի արդյունքն է:

Գյումրիի կենտրոնական հատվածում գործում է նաեւ համայնքային ոստիկանության հենակետ: Այն սպասարկում է շուրջ 30 հազար բնակչի:

«Հենակետում ծառայությունն իրականացվում է երկու հերթափոխով: Քանի որ հենակետը գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածում եւ շրջակայքում կան բազմաթիվ հյուրանոցներ, մեզ դիմում են նաեւ բազմաթիվ զբոսաշրջիկներ: Մենք նրանց օգնում ենք, աջակցում եւ ուղղորդում»,- նշեց համայնքային ոստիկանության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Արտյոմ Ղումաշյանը:

Լավագույն ստորաբաժանման անչափահասների գործերով բաժանմունքի ծառայողները անցած տարի լիովին վերահսկել են օպերատիվ իրավիճակը: Բացահայտվել են անչափահասների կողմից կատարված հանցագործություններ, իրականացվել են իրավախախտումների եւ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ 150 շրջագայություններ, հանրակրթական դպրոցներում անցկացվել են իրավական թեմաներով 250 զրույց-զեկույցներ:

Բաժնի սպասարկած վարչական տարածքի բոլոր դպրոցներում կան դպրոցական տեսուչներ, որոնք սերտ համագործակցում են դպրոցների տնօրինության հետ: Թեմայի շուրջ զրուցեցինք Գյումրիի թիվ 7 դպրոցի տնօրեն Գագիկ Կարապետյանի եւ թիվ 32 դպրոցի տնօրեն Արմինե Սուքիասյանի հետ. «Դանդիպումների, առանձնազրույցների միջոցով ամեն մի երեխայի հետ անհատական մոտեցում են ցուցաբերում տեսուչները: Եվ ամենակարեւորը, որ համագործակցված ենք աշխատում: Մեր նպատակը մեկն է՝ հանուն երեխայի, եւ այդ նշանաբանով էլ աշխատում ենք»,- նշեցին նրանք:

Ոստիկանության Կումայրիի բաժնի ենթակայությամբ է գործում նաեւ «Շիրակ» օդանավակայանի գծային բաժանմունքը: Միայն անցած տարի բաժանմունքի ծառայողները հայտնաբերել են 44 հետախուզվողի: Մեծ աշխատանք է տարվում նաեւ մարդկանց ապօրինի փոխադրման եւ աշխատանքային թրաֆիքինգի դեպքեր հայտնաբերելու ուղղությամբ:

«Ոստիկանության Կումայրիի բաժնի «Շիրակ» օդանավակայանի գծային բաժանմունքի ծառայողները իրականացնում են շուրջօրյա ծառայություն՝ ապահովելով օդանավակայանում հասարակական կարգն ու հասարակական անվտանգությունը: Ձեռնարկված տարբեր միջոցառումների արդյունքում հայտնաբերվում են նաեւ տարբեր հոդվածներով հետախուզվողներ, բացահայտվում են հանցագործություններ»,- նշեց «Շիրակ» օդանավակայանի գծային բաժանմունքի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Արման Աբաջյանը:

Բաժնի պարեկապահակետային ծառայության դասակի եւ երրորդ սպայական ջոկի ծառայողները Գյումրիում շուրջօրյա պահպանում են հասարակական կարգը: Բացի այդ՝ հասարակական կարգ եւ անվտանգություն է ապահովվել զանգվածային մոտ 200 միջոցառումների ընթացքում: Անցած տարի պարեկապահակետայինները բացահայտել են հանցագործության 11 դեպք:

Ոստիկանության Կումայրիի բաժնի վարչական շենքը բացվեց անցած տարվա աշնանը: Այն հագեցած է բոլոր հարմարություններով ու տեխնիկական միջոցներով: Այստեղ են կենտրոնացած նաեւ անձնագրային, փորձաքրեագիտական բաժանմունքները, ճանապարհային ոստիկանության վաշտը, «Դինամո» մարզական-հասարակական կազմակերպության մասնաճյուղը: Ամեն ինչ ստեղծված է քաղաքացուն բարձրորակ ծառայություն մատուցելու համար: Եվ դա իրենց բարեխիղճ ծառայությամբ ապացուցեցին բաժնի ծառայողները՝ ստանալով լավագույնի կոչումը:

«Տարվա լավագույն ստորաբաժանում կոչումը խիստ պարտավորեցնող է: Անձնակազմը առավել պատասխանատվությամբ է վերաբերվում օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը, այն է՝ նվիրումով ծառայել Հայաստանի Հանրապետությանն ու ժողովրդին»,- մեզ հետ զրույցում նշեց ոստիկանության Կումայրիի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Դակոբյանը:

Ի դեպ, Շիրակի մարզը լավագույնների առումով ռեկորդակիր է: Հենց այս մարզից են ճանաչվել ոչ միայն 2018 թվականի տարվա լավագույն ստորաբաժանումը, այլեւ օպերլիազորը եւ պահպանության տեսուչը: Սա խոսում է մարզի ոստիկանության բարձր պատրաստվածության ու բարեխիղճ ծառայության մասին:

«Որպես մարզային վարչության պետ՝ ընդհանուր առմամբ ծառայությունը գնահատում եմ դրական, որի արդյունքում էլ ունեցանք նման ձեռքբերումներ: Խնդիր ենք դրել մարզային վարչության ստորաբաժանումների առաջ, որ փոխանցիկ դրոշը ոստիկանության Կումայրիի բաժնից փոխանցվի կա՛մ Մուշ, կա՛մ Ախուրյան, կա՛մ Արթիկ: Կարծում եմ, որ մեր տղաները կարդարացնեն իրենց ծառայության մեջ, եւ դրոշը կմնա Շիրակի մարզային վարչությունում»,- նշեց ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Սեւան Քոչարյանը:

Գյումրիում այսօր ամենուրեք նկատելի են բարձրացող շենքեր, բարեկարգվող փողոցներ ու մարդկանց ժպիտներ: Ոստիկանությունն էլ իր հերթին անում է ամեն ինչ՝ գյումրեցիների խաղաղ, անվտանգ ու բնականոն կյանքն ապահովելու համար: Ոստիկանները շարունակում են ծառայել օրենքին ու ժողովրդին, իսկ ամենաօբյեկտիվ գնահատականը քաղաքացու ջերմ ու շնորհակալական խոսքերն են լավագույն բաժնի լավագույն ոստիկաններին:

Ոստիկանները բռնեցին ավազակություն կատարածին

Հունիսի 26-ի կեսօրին մետրոյի «Գործարանային» կայարանի տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Մետրոպոլիտենի պահպանության բաժնի ոստիկանին էր մոտեցել մի քաղաքացի եւ հայտնել, որ ինչ-որ մեկը մետրոյի կայարանի հարակից ավտոկայանատեղիում մի տղամարդու է խփել, հափշտակել փողը, բջջային հեռախոսն ու փախել է Երրորդ մասի ուղղությամբ:

Ոստիկանության ծառայողներն անմիջապես արձագանքել էին, հետապնդել եւ բռնել էին քաղաքացու նկարագրած անձին:

Դեպքի վայր էր մեկնել ոստիկանության Շենգավիթի բաժնի օպերատիվ խումբն ու պարզել, որ տղամարդը նախ փորձել էր բացել Բագրատունյաց պողոտայում կայանված «Օպել»-ի դուռը, սակայն հանդիպելով մեքենայատիրոջ դիմադրությանը, նրան խփել-գցել էր եւ գրպանից հափշտակելով 75 հազար դրամ, բջջային հեռախոս՝ փախել էր:

Քրեական հետախույզները 27-ամյա տղամարդուն բերման են ենթարկել ոստիկանության Շենգավիթի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվել է գողոնը:

Քիչ անց հիվանդանոցից հայտնել են, որ «շտապօգնության» խումբը ճակատի պատռած վերքով, այտի եւ քթի քերծվածքներով բուժօգնության է տեղափոխել «Օպել»-ի վարորդին:

Կատարվում է նախաքննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Օգնեց» նաեւ իրեն

Դիլիջանցի Արմեն Խաչատրյանը մատուցող էր աշխատում հյուրանոցային համալիրներից մեկում: Օրվա մեծ մասն անցկացնում էր աշխատավայրում: Աշխատակցուհիներից մեկը՝ Նվարդ Սիմոնյանը, իր բանկային քարտից փող էր փոխանցելու քրոջը: Դրանից գլուխ չէր հանում, եւ օգնության հասավ Արմենը, որն իր հեռախոսով էր կատարելու փոխանցումը: Դրա համար պահանջվում էր Նվարդի բանկային քարտը, ինչը վստահեց Արմենին: Փոխանցումը կատարելու ընթացքում էլ Արմենը որոշեց կատարել հանցարարք: Ուրիշի քարտի գումարով իր համար 48 հազար դրամի չափով գնումներ արեց:

Արմենին թվում էր, թե գործընկերուհին իրեն չի էլ կասկածի: Այնինչ... Որոշ ժամանակ անց, երբ Նվարդը ստուգեց քարտի մնացորդային գումարը՝ զարմացավ: Բանկից հանեց քաղվածքը ու պարզեց եղելությունը: Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները:

Նյութերի նախապատրաստման ընթաքում Արմեն Խաչատյանը խոստովանական բացատրություն տվեց: Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 181 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք:

Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Վեճ՝ անիերթեր առիթով

Մարալիկ քաղաքի բնակիչ Անդրանիկ Կիրակոսյանն ընկերոջ՝ Ռոմանի հետ իր մեքենայով ուղեւորվեց Շիրակի մարզի Հոռոմ գյուղ:

Անդրանիկին Հոռոմ գյուղում հանդուրժողականությունը լքեց, եւ նա ճանապարհը չզիջելու համար զայրացավ գյուղի բնակիչ Գեւորգ Ավագյանի վրա:

Զայնային ազդանշանին հաջորդեց դիպողությունը, ինչը Գեւորգը չընդունեց: Փորձեց անձնոթին հասկացնել, որ չզիջելու պատճառը ջրափոսն էր: Եթե արգելակեր՝ հնարավոր է մեքենան վնասեր, դրա համար էլ նախընտրեց խախտում անելը:

Չհասկացան իրար ու վիճեցին: Ի վերջո, մարալիկցու նյարդերը տեղի տվեցին, եւ նա խփեց Գեւորգի դեմքին: Հակադարձ հարվածները չուշացան:

Անդրանիկի ընկերոջ՝ Ռոմանի միջամտությամբ վեճը դադարեց: Բայց ուշ էր. Գեւորգը հասցրել էր խախտել քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծը) պահանջները:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Զենք եւ օրենք

Զարգացած երկրներում հրազեն ձեռք բերելու եւ պահելու հարցը վերահսկվում է իրավապահ մարմինների կողմից: Հետաքրքիր է, որ այն երկրներում, որտեղ հրազեն կրելու ավանդույթները ձեւավորվել են 19-րդ դարասկզբին՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ներկայումս իշխանությունները որդեգրել են քաղաքացիական անձանց «զինաթափելու» մարտավարություն: Հատկապես Մեծ Բրիտանիայում շատ վճռական են տրամադրված:

Կան երկրներ, որտեղ քաղաքացիները վաղուց իրավունք չունեն զենք ձեռք բերել եւ պահել: Ճապոնիայում, օրինակ, դժբախտ պատահարների եւ զենքի կիրառմամբ կատարված հանցագործությունները նվազագույնի հասցնելու նպատակով, հրազեն կրելու իրավունք ունեն միայն իրավապահները եւ երկրի պաշտպանության ծառայողները: Այս երկրում արգելված է անգամ կրել արտաքուստ հրազեն հիշեցնող իր: Օրենքն արգելում է ատրճանակների մակետային տարբերակների վաճառքը: Ճապոնացու համար դժվար է անգամ որսորդական հրացան ձեռք բերելը, քանի որ այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը բազմաթիվ սահմանափակումներ է նախատեսում: Իսկ եթե քաղաքացին ողորկափող որսորդական հրացան ձեռք բերելու եւ կիրառելու թույլտվություն ստացել է, ապա, օրենքի համաձայն, պարտադիր պետք է անցնի համապատասխան պատրաստություն եւ քննություն հանձնի: Այդ նույն քաղաքացին միայն տասը տարի անց իրավունք կունենա ձեռք բերել որսորդական ակոսափող հրացան: Ճապոնիայի օրենքը արգելում է որսորդական հրացանն ինքնապաշտպանության նպատակով օգտագործելը: Որսորդական օդամղիչ հրացանների համար անհրաժեշտ է հասարակական անվտանգության հանձնաժողովի թույլտվությունը: Զենք կրելու սահմանափակումներն այս երկրում համարում են ճիշտ քաղաքականություն: Սա այն երկիրն է, որ դեռեւս 16-րդ դարից արգելում է զենքի անհատական կիրառումը: Օրենքը խախտելու համար քաղաքացին կարող է դատապարտվել ազատազրկման՝ մեկից տասը տարի ժամանակով, իսկ կիրառման դեպքում՝ երեք տարուց մինչեւ ցմահ ազատազրկման: Հետաքրքիր մեկ փաստ եւս՝ Ճապոնիայի ոստիկանության կողմից տարեկան առգրավվում է երկու հազար միավոր զենք: Զենքի ապօրինի շրջանառության համար նախատեսված պատասխանատվությունը տարածվում է նաեւ երկրի սահմաններից դուրս. այլ երկրի տարածքում նման հանցագործություն կատարելու համար Ճապոնիայի քաղաքացուն հայրենիքում սպառնում է մինչեւ հինգ տարի ժամկետով ազատազրկում:

Զենք կրելու, ձեռք բերելու եւ պահելու սահմանափակումները տվել են իրենց դրական արդյունքը. Ճապոնիայում հրազենի գործադրմամբ կատարված սպանություններն ընդհանուրի մեջ կազմում են 4,1%: Համեմատության համար նշենք, որ հարյուր քսան միլիոն բնակչություն ունեցող Ճապոնիայում տարվա կտրվածքով հրազենի գործադրմամբ կատարված քրեական պարզաբանումները չեն գերազանցում երկու հարյուրը:

Սակայն կան երկրներ, որոնք միջազգային կառույցների կողմից ճանաչվել են վտանգավոր հենց քաղաքացիների զինվածության պատճառով: Առաջին հորիզոնականներում են Լիբիան, Սոմալին, Աֆղանստանը, Պակիստանը, Շրի Լանկան, Եմենը, Հայիթին:

Մեր երկրում ոստիկանության ղեկավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում է զենքի եւ ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման աշխատանքը: Տարվա ընթացքում մի քանի անգամ անցկացվում են համալիր կանխարգելիչ միջոցառումներ: Բացատրական աշխատանքների շնորհիվ առաջընթաց է նկատվում բնակչության կողմից զենքի եւ զինամթերքի կամավոր հանձման գործում:

Մեր հանրապետությունում զենքի արտադրման լիցենզիան տալիս է կառավարությունը, իսկ առեւտրի լիցենզիան՝ ոստիկանությունը:

Քաղաքացիական զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

ա) «Զենքի մասին» ՀՀ օրենքով սահմանված տարիքի չհասած քաղաքացուն,

բ) զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների բացակայության մասին բժշկական եզրակացություն չներկայացնողներին,

գ) դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, որոնց դատվածությունն օրենքով սահմանված կարգով չի մարվել,

դ) հանցագործություն կատարելու համար պատիժ կրողներին,

ե) մշտական բնակության վայր չունեցողներին,

զ) զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների իմացության ստուգում անցնելու փաստը հաստատող եւ օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնողներին:

Զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկը որոշում է կառավարությունը: Բժշկական ստուգման կարգը սահմանում է առողջապահության հանրապետական մարմինը:

Կառուցվածքով զենքի նմանվող իրերը, ոչ ավելի, քան 3 ջոուլ փողային էներգիայով օդաճնշիչ հրացանները, ատրճանակները (այդ թվում՝ թմբուկավոր եւ ռեւոլվեր), ոչ ավելի, քան 6 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակները (այդ թվում՝ թմբուկավոր ռեւոլվեր) եւ դրանց փամփուշտները, որոնք մտած են կադաստր՝ որպես հրազեն եւ գազային զենք, ձեռք են բերվում առանց թույլտվության, եւ գրանցման ենթակա չեն:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Գառան բախտ

55-ամյա մի վարորդ բեռնատարով երթեւեկելիս նկատել էր մի գառ, եւ հափշտակելու դիտավորությամբ այն տեղափոխել էր իր ավտոմեքենայի սրահ: Սակայն իր կամքից անկախ՝ չէր կարողացել գողությունը հասցնել նպատակին: Ճանապարհային ոստիկանները ավտոմեքենան տեղափոխել են բաժին, որտեղ գառն արձանագրությամբ առգրավվել է:

Շախմատային նովել

39-ամյա մի կին հաղորդում է տվել, որ ծանոթ 30-ամյա շախմատիստը, օգտվելով իր չտեղեկացված լինելու հանգամանքից, իր հետ պայմանավորվել է, որ բուքմեյքերական գրասենյակի միջոցով իր հերթական խաղին խաղադրույք անի՝ 200 հազար դրամ, որի կրկնապատիկը կստանա հաջորդ օրը:

Մայիսի 30-ին կինը 200 հազար դրամ է փոխանցել մի հաշվեհամարի, իբր խաղադրույք է արել, սակայն ոչ մի փող հետ չի ստացել:

Քաջ Նազարը

57-ամյա մի կին հաղորդում է տվել, որ իրենց տանը, վիճաբանության ժամանակ, ամուսինը ճանճի փայտով մի քանի անգամ խփել է իրեն՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Չափազանցված ահազանգ

Ոստիկանություն է զանգել 55-ամյա մի տղամարդ եւ հայտնել, թե նախկին ծննդատան 2-րդ հարկում մարդ է մահացել:

Մեկնած ոստիկաններին տղամարդը հաղորդում է տվել, որ մասնաշենքում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ այնտեղ բնակվող 53-ամյա Ալվարդը կաթսայով խփել է իր գլխին՝ պատճառելով վնասվածք:

Խոճկորներն ու սագերը

30-ամյա մի գյուղաբնակ հաղորդում է տվել, որ օրեր առաջ գոմից բաց է թողել իր երկու խոճկորն ու երկու սագը՝ դաշտում արածելու, սակայն նրանք չեն վերադարձել: Նա նաեւ ենթադրել է, որ կենդանիները գողացել են՝ պատճառելով մոտ 90 հազար դրամի վնաս:

Հոգեհանգստի պահին

Մի գյուղի համայնքապետարանի 61-ամյա աշխատակիցը հաղորդում է տվել, որ համագյուղացու հոգեհանգստի արարողության ժամանակ նույն գյուղի բնակիչը թքել է հանգուցյալի տան դիմաց, իսկ երբ սաստել է, նա հայհոյել, քաշքշել է իրեն եւ խփել դեմքին, ինչի հետեւանքով կոտրվել է ակնոցը:

Հանգամանքները պարզվում են:

Մեքենան մեքենայով տարավ

Գողություն կատարելու կասկածանքով ոստիկանները բերման են ենթարկել 26-ամյա մի երիտասարդի: Պարզվել է, որ նա հունիսի 1-ին խաղահրապարակում, ժամանակավոր վարելու պատրվակով, վարձավճարով վերցրել է մանկական ավտոմեքենա՝ 75 հազար դրամ արժողությամբ, հետո տաքսիով հեռացել է՝ հափշտակելով այն:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունիսի 27-ից հուլիսի 11-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 86 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 2-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ ծեծի եւ շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու, 2-ը՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 1-ը՝ կողոպուտի, 12-ը՝ գողության, 2-ը՝ գողության փորձի, 6-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու,1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ անօրինական միգրացիայի կազմակերպման, 1-ը՝ նրանց միջեւ ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու, 3-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 1-ը՝ դասալքության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 10 հետախուզվող:

Արձանագրվել է 174 ճանապարհատրանսպորտային պատահար. 20 մարդ զոհվել է, 271-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 43 դեպք. 2 մարդ զոհվել է, իսկ 43-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հուլիսի 8-ին «Դեու» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Քրիստափորի փողոցում վրաերթի է ենթարկել 58-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Երեւանի Սարալանջի փողոցում իրար են բախվել «Օպել» եւ «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 18-ամյա ուղեւորը, «Միցուբիշի»-ի 44-ամյա վարորդը եւ 40-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Երեւանի Տիգրան Մեծի պողոտայում իրար են բախվել «Հագեր», «Հունդաի» եւ «ՎԱԶ-21102» մակնիշի ավտոմեքենաներ. «Հունդաի»-ի 6-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 53-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան Արմավիրի մարզի Արգավանդ-Արազափ ճանապարհի 3-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել դաշտում. 24-ամյա վարորդը եւ չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցում «ՎԱԶ-2115» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-2115»-ի 28-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցում «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 11-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 8-ին Դիլիջանի Կամոյի փողոցում իրար են բախվել «Օպել Աստրա» եւ «Մերսեդես Վիանո» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես Վիանո»-ի ՌԴ քաղաքացի, 26-ամյա ուղեւորը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է, իսկ «Մերսեդես Վիանո»-ի 27-ամյա ուղեւորուհին տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 9-ին Երեւանի Արշակունյաց պողոտայում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 46-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 9-ին Մարտունի-Վարդենիս-Քարվաճառ ճանապարհի 9-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2105» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 9-ին Երեւան-Մեղրի M-2 ճանապարհի 324-րդ կմ-ին «Մերսեդես Բենց C180» մակնիշի ավտոմեքենան բախվել է քարերին եւ կողաշրջվել. 24-ամյա վարորդը եւ 27-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 9-ին Սպիտակ-Գյումրի ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2101» եւ «ԳԱԶ-2410» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2101»-ի 72-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 10-ին Սպիտակ-Երեւան ճանապարհի 17-րդ կմ-ին «Միցուբիշի Գալանտ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ ընկել ձորակը. 22-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Նովոչերկասկ

Խորհրդային ղեկավար Նիկիտա Խրուշչովի համախոհները այնքան էլ չեն սիրում հիշել «եգիպտացորենի արքայի» ղեկավարման տարիների բացասական դեպքերն ու երեւույթները: Ստալինի անհատի պաշտամունքը եւ արյունալի գործերը բացահայտած անձնավորությունն ինքը հանդիսացավ ճգնաժամի մեղավոր, որն ավարտվեց Նովոչերկասկում ուժի կիրառմամբ ու բանվորների զանգվածային ցույցի գնդակահարությամբ:

1960-ական թթ. սկզբներին երկիրը հոգնել էր Խրուշչովի «բուռն» գործունեությունից: Նրա հեղինակությունը չփրկեցին նույնիսկ տիեզերքի հետ կապված նվաճումները: Խորհրդային ղեկավարի չմտածված տնտեսական քաղաքականությունը հանգեցրեց նոր հիմնահարցերի առաջացմանը, հատկապես սրվեց պարենային հարցը: Եթե Ստալինի օրոք գրեթե ամեն տարի հայտարարում էին տարբեր ապրանքների գների իջեցման մասին, ապա 1962 թ. մայիսին կառավարությունը ստիպված էր բարձրացնել մսի եւ յուղի մանրածախ գները՝ 30 եւ 25 տոկոսով: Զավեշտալի էր, որ գների բարձրացումը խորհրդային ղեկավարությունը բացատրում էր աշխատավորների պահանջով:

Նման որոշումը դժգոհություն առաջացրեց բանվորների շրջանում, սակայն սոցիալական պայթյունը տեղի ունեցավ Ռոստովի մարզի 145 հազար բնակչություն ունեցող Նովոչերկասկ քաղաքում, որի էպիկենտրոնը Բուդյոննու էլեկտրաքարշերի կառուցման գործարանն էր: Գործարանի աշխատակիցների թիվը հասնում էր 15 հազարի: Նրանց մի մասը Նովոչերկասկ էր եկել շրջակա գյուղերից ու իրենց ընտանիքների հետ ապրում էին սոցիալական ծանր պայմաններում, բարաքներում կամ էլ վարձու բնակարաններում: Բանվորի աշխատավարձը 100 ռուբլի էր, իսկ բնակարանի վարձակալությունը՝ 20-ից 35 ռուբլի:

Գների կտրուկ աճը ուժեղ հարված հասցրեց նրանց ընտանեկան բյուջեին: Մայիսի 31-ին դրան գումարվեց նաեւ արտադրանքի նորմաները ավելացնելու հրամանը, ինչը նշանակում էր աշխատավարձի իջեցում:

1962 թ. հունիսի 1-ին պողպատածուլական արտադրամասում սկսվում է տարերային հանրահավաք, որի ընթացքում փորձում էին պարզել՝ «Ո՞վ է մեղավոր» եւ «Ի՞նչ անել»: Քննարկումն ավարտվեց նրանով, որ մոտ 200 հոգի որոշեցին դադարեցնել աշխատանքը եւ իրենց խնդիրները ներկայացնել գործարանի ղեկավարությանը: Այդ ժամանակ հիմնահարցը հնարավոր էր լուծել ավելի մեղմ ճանապարհով, գալ որոշակի համաձայնության ու հարթել, սակայն գործարանի տնօրեն Բորիս Կուրոչկինը չգնահատեց ստեղծված լուրջ ու պայթյունավտանգ պահը: Մի քանի րոպե անց գործարանում դադարեց աշխատանքը, եւ բանվորների ձեռքին հայտնվեցին պաստառներ՝ «Մի՛ս, կա՛թ, աշխատավարձի բարձրացո՛ւմ» մակագրությամբ: Բանվորները արգելափակեցին երկաթուղին եւ կանգնեցրին «Սարատով-Ռոստով» մարդատար գնացքը:

Լուրը ոտքի հանեց գրեթե ողջ Նովոչերկասկը: Էլեկտրաքարշերի գործարան շտապեցին այլ ձեռնարկությունների բանվորներ: Կեսօրին նրանց թիվը հասավ 5 հազարի:

Արտակարգ պատահարի մասին զեկուցեցին Մոսկվա՝ անձամբ Խրուշչովին, որը հրամայեց Նովոչերկասկ ուղարկել բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված հանձնաժողով, որի անդամների թվում էին ԽՄԿԿ ԿԿ-ի նախագահության անդամներ Ֆրոլ Կոզլովը, Անաստաս Միկոյանը. Ռոստովի մարզկոմի առաջին քարտուղար Բասովը, ՆԳ նախարարության, Պետական անվտանգության կոմիտեի ու բանակի ներկայացուցիչներ:

Նովոչերկասկի ղեկավարությունը պատրաստ չէր գործել նման պայթյունավտանգ պայմաններում եւ ճիշտ չկողմնորոշվելով ստեղծված իրադրության մեջ՝ կրկին սխալ թույլ տվեց: Փոխանակ մարդկայնորեն մոտենալու, զրուցելու, հանգստացնելու գործադուլավորներին՝ մարզկոմի քարտուղար Ալեքսանդր Բասովն ընթերցեց ԽՄԿԿ ԿԿ-ի կոչը: Ամբոխը սկսեց սուլել եւ քարեր նետել, երբ փորձեց խոսել գործարանի տնօրեն Կուրոչկինը: Սարսափած Բասովը զանգեց զինվորականներին եւ օգնություն խնդրեց: Սկսվեց գործարանի թալանը եւ սարքավորումներ ջարդելը: Օգնության եկած 200 անզեն միլիցիոներներին ապստամբները քշեցին, մի քանիսին էլ ծեծեցին:

Երեկոյան գործարանի մոտ հայտնվեցին բանակային զրահամեքենաներ, բայց որեւէ գործողության չդիմեցին: Որոշ ժամանակ անց զրահամեքենաները հեռացան: Հետագայում հայտնի դարձավ, որ նման գործողությամբ զինվորականները շեղել էին մարդկանց ուշադրությունը, որպեսզի բանվորական արտահագուստով ՊԱԿ-ի աշխատակիցները պաշարված գործարանից դուրս բերեն Բասովին եւ մյուս իշխանավորներին: Քաղաքում պարետային ժամ սահմանվեց, ինչը շարունակվեց մինչեւ հունիսի 6-ը:

Գիշերը բանվորները տեսնելով, որ իշխանությունները որեւէ գործողություն չեն կատարում, որոշեցին առավոտյան գնալ կուսակցության քաղաքային կոմիտե եւ իրենց պահանջների մասին հայտնել ողջ երկրին: Գործադուլավորների առավել արմատական ներկայացուցիչները առաջարկում էին գրավել հեռախոսակայանը եւ փոստը, սակայն մեծամասնությունը չաջակցեց նրանց: Իսկ Մոսկվայում Խրուշչովը պահանջում էր ճնշել «խռովությունը Նովոչերկասկում»: ԽՍՀՄ պաշտպանության նախարար Ռոդիոն Մալինովսկին հրամայեց Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի հրամանատար, գեներալ Իսա Պլիեւին՝ «Զորամիավորումները ոտքի հանել, կարգ ու կանոն հաստատել, զեկուցել»: Օպերացիայի ղեկավարումը հանձնարարվեց Պլիեւի տեղակալ, գեներալ Մատվեյ Շապոշնիկովին:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Վայրագ պատմություններ

Ադրբեջանում կատարված ողբերգության գլխավոր գործող անձինք մեկ ընտանիքի անդամներ էին: Դեպքը տեղի է ունեցել տարիներ առաջ: Սարսափ-ֆիլմերին վայել սյուժեն «մարմնավորվում» էր Ադրբեջանի փոքրիկ քաղաքներից մեկում՝ Ալի Բայրամլիում:

Ընտանիքի հայրն անձամբ ներկայացավ ոստիկանության բաժին ու խոստովանեց, որ հենց նոր ողջ-ողջ այրել է իր երեխաներին՝ 16-ամյա դստերն ու երկու տարեկան որդուն:

Նրան չհավատացին, մտածում էին, թե հարբեցողությունից ուղեղը մթագնել է: Բայց երբ ոստիկանական կարգախումբը ժամանեց նշված հասցե ու համոզվեց, որ նա ճիշտ է ասում, կատաղությանն ու չարությանը այլեւս սահման չկար: Նախկինում դատված, ոչ մի տեղ չաշխատող Ափլան Անիեւը իսկապես նման հակամարդկային եղանակով հաշվեհարդար էր տեսել իր երեխաների հետ: Նույնիսկ այն բանից հետո, երբ ավերակների տակից հանեցին թշվառների կիսայրված դիակները, դեռ շարունակում էին մտածել, որ դա դժբախտ պատահարի հետեւանք է, ու հայրը կապ չունի, պարզապես խելքը թռցրել է վշտից եւ իրեն մեղավոր է համարում կատարվածի համար: Սակայն քննությամբ պարզվեց, որ կատարվել է վատթարագույնը եւ ամենասարսափելի կերպով. աղջիկն ու տղան լաց էին եղել մահվանից առաջ, աղերսել էին խնայել իրենց, չէին ուզում մեռնել: Բայց ո՛չ արցունքները, ո՛չ աղերսանքը արդյունք չունեցան:

...Նախկին վարորդ

Ափլան Անիեւը չորս երեխա ուներ: Ողբերգությունից երկու ամիս առաջ նրան լքել էր կինը: Պատճառն այն էր, որ Ափլանը Բաքոսի մեծ երկրպագու էր: Ամիսներ շարունակ կինը երեխաների հաց հանապազօրյան վաստակում էր մուրացկանություն անելով: Երեխաներն էլ մուրացկաններ դարձան կամ թերմացք էին հավաքում աղբարկղերից...

Ավագը 16-ամյա դուստրն էր: Այդ ճակատագրական օրն էլ նա կրտսեր եղբոր հետ գնացել էր մուրալու: Իսկ Ափլանին դուր չէր գալիս, որ աղջկա մասին սկսել էին ինչ-ինչ լուրեր պտտվել: Մանավանդ, որ դրանք հիմնազուրկ էին: Ու հոր արյունը գլուխը տվեց: Հոգսից ազատվելու ծրագիրը, որ հղացավ, պարզունակ էր եւ հրեշավոր. սպանել երեխաներին ու պրծնել հոգսից:

Այդ չարաբաստիկ օրը նա տղային ու աղջկան գտավ փողոցում եւ բերեց տուն: Դաժանորեն ծեծեց նրանց, կապկպեց ու գնաց որոնելու մյուս երկուսին, որոնց բախտն այս անգամ բերեց: Հայրը չգտավ երեխաներին: Դրանից գազազած՝ Ափլանը վերադարձավ տուն, կապկպվածների վրա բենզին լցրեց ու կրակի տվեց: Ապա փակեց դուռն ու քայլերն ուղղեց դեպի ոստիկանություն...

Դատարանը երեխայասպան հորը դատապարտեց ցմահ բանտարկության, եւ բոլորը, առանց բացառության, գտնում էին, որ դա չափազանց մեղմ պատիժ է: Ու նաեւ համոզված էին, որ նա բանտում երկար չի ապրի. այնտեղ ուրիշ օրենքներ են գործում...

Ողջ մնացած երեխաներին տեղի իշխանություններն ուղարկեցին Բաքու՝ գիշերօթիկ դպրոց, իսկ կինը՝ Գյուլնարան, խելագարվեց ու տեղափոխվեց հոգեբուժական հիվանդանոց...

Շարունակելի

Անչափահասը եւ թմրամիջոցները

Մնողները թմրամիջոցների մասին խոսելիս, համակվում են տագնապով եւ մտահոգությամբ, ինչը հասկանալի է: Չնայած աշխարհով մեկ թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ գործածման դեմ ծավալվող եւ հսկայական միջոցներ խլող կանխարգելիչ ծրագրերին՝ իրողությունն այն է, որ տարեցտարի ավելի մեծ թվով դեռահասներ եւ երիտասարդներ են փորձում «համտեսել» այդ «հրապույրները», իսկ նրանց մի մասը նաեւ մուտք է գործում թմրամիջոցների «սեւ շուկա»: Այլ կերպ ասած՝ մեր օրերում ապօրինի թմրամիջոցների խնդիրը «երիտասարդանում» է:

Զարմանալի թող չթվա, բայց ներկայումս դեռահասները թմրամիջոցների մասին գիտեն ավելին, քան նրանց ծնողները: Մենք հստակ չենք պատկերացնում, թե ինչպիսի աշխարհում են ապրում մեր երեխաները: Նրանց աշխարհը տարբերվում է մեր պատանեկությունից: Մեր երեխաները տեղեկություններ են ստանում ոչ միայն ֆիլմերից եւ հեռուստատեսությունից, այլեւ ինտերնետային կայքերից, որոնց մասին մեր պատանեկության շրջանում պատկերացում չունեինք: Տարաբնույթ տեղեկատվությունը կարող է մեր երեխաներին ապակողմնորոշել՝ իբր թմրամիջոց փորձելը նրանց հասունացման անժխտելի տարրերից է:

Ով սկսում է ծխախոտ, ալկոհոլ կամ թմրամիջոց գործածել, չի պատկերացնում, որ մի օր կարող է կախվածության մեջ ընկնել այդ նյութերից: Մինչդեռ կախվածությունը հիվանդություն է, որը բնորոշվում է թմրամիջոց հայթայթելու եւ ընդունելու անկասելի պահանջով՝ անկախ դրանց առաջացրած հետեւանքներից:

Հետազոտությունները վկայում են, որ բոլոր թմրամիջոցները ուղեղի վրա ունեն մեծ ազդեցություն, իսկ դրանց մշտական գործածումը հանգեցնում է ուղեղի միկրոկառուցվածքի եւ ֆունկցիաների փոփոխությունների, արդյունքում՝ զարգանում է թմրամիջոցի նկատմամբ կախվածություն:

Թմրամիջոցից կախվածությունը պայմանավորված է նաեւ ինչպես գործածվող թմրամիջոցի տեսակից, ընդունման բնույթից, հաճախականությունից եւ քանակից, այնպես էլ գործածողի անձնային հատկանիշներից:

Անկախ այն հանգամանքից, թե ինչ պայմաններում է երեխան մեծանում եւ ովքեր են նրա ընկերները, նա կարող է հայտնվել մի այնպիսի իրավիճակում, երբ ընկերներից մեկնումեկը կառաջարկի «խախտել ծնողական սահմանափակումները»: Շատերի համար «ոչ» ասելը այնքան էլ դյուրին գործ չէ. մի կողմից՝ բնական հետաքրքրությունը, մյուս կողմից՝ ընկերական շրջապատում հարգանքը կորցնելու վախը կարող են նրան հետ պահել ընկերոջ առաջարկից հրաժարվելու մտքից:

Լավագույն տարբերակը երեխային նման իրավիճակին նախապատրաստելն է՝ փորձելով այն դերը, որը երեխան պետք է կատարի նման դեպքերում: Այդկերպ երեխայի մոտ կամրապնդվի իր խոսքի տերը լինել. վիճակահանությունը, որ իր որոշումն անխախտ է, նաեւ հմտորեն կհասկացնի դիմացինին, որ ինքը ժխտում է ընկերների՝ թմրամիջոց փորձելու որոշումը, այլ ոչ թե նրանց՝ ընդհանուր առմամբ:

Անկախ այն հանգամանքից, թե դիմել է երեխան ծնողներին նման հարցադրումով, ծնողը պետք է ժամանակ գտնի եւ մինչեւ երեխայի նման իրավիճակում հայտնվելը նրան «ոչ» ասելու գործնական կամք պատվաստի:

Երեխան պետք է պատրաստ լինի նաեւ դիմացինի հնարավոր հակադարձումներին: Արդյունավետ է հատկապես այն մեթոդը, երբ երեխան իր «չկոտրվելը» հաստատում է մի քանի անգամ կրկնելով իր ժխտողական պատասխանը, մինչեւ առաջարկողը կհամոզվի, որ դիմացինն այդ հարցում իրոք անկոտրում է: Կամ էլ երեխան կարող է փոխել խոսակցության թեման՝ հասկացնելով, որ այդ հարցն արդեն փակված է: Կամ էլ, որոշ պարագայում, ինքն է փորձում համոզել, «դարձի բերել» ընկերոջը՝ իր խելացի փաստարկներով:

Հետազոտությունները վկայում են, որ «համարձակ» դեռահասների մեծ մասը սկսում է ծխախոտ գործածել 12 տարեկանում, ալկոհոլային խմիչքներ՝ 13-ում, իսկ մարիխուանա՝ 14-ում: Յուրաքանչյուր ծնող պետք է մտածի, որ դա կարող է լինել հենց ի՛ր երեխան, եւ հետեւողական ու աչալուրջ լինի, անմիջական զրույցներ վարի երեխայի հետ՝ աստիճանաբար հասցնելով այն գիտակցմանը, որ թմրամիջոցը վնասակար սովորույթ լինելուց զատ՝ կործանարար է ողջ կյանքի համար:

Բնակարանային գողությունը բացահայտվեց

Հունիսի 18-ի գիշերը ոստիկանության Նոր Նորքի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց: Կինը հայտնում էր, որ տնից բացակայել են մեկ ժամից քիչ ավելի եւ վերադառնալով՝ բնակարանը տակնուվրա են գտել:

Օպերատիվ խումբը անմիջապես քաղաքացու նշած հասցե մեկնեց: Դեպքի վայրի զննությամբ պարզվեց, որ անհայտ անձը կամ անձինք բնակարանի դուռը բացել էին հարմարեցված բանալիով: Գողացել էին փող, ոսկյա թեւնոց ու բիժուտերիա:

Հանցագործությունն արագ բացահայտելու, այն կատարած անձին կամ անձանց թարմ հետքերով հայտնաբերելու համար ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության, Նոր Նորքի բաժնի, Շիրակի մարզային վարչության եւ Կումայրիի բաժնի ծառայողները համատեղ գործեցին: Դեպքից մոտ մեկ ժամանց Երեւանի Բաղրամյան-Մոսկովյան խաչմերուկից, բնակարանային գողությունը կատարելու կասկածանքով, ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկվեց Գյումրիի բնակիչ, 26-ամյա մի տղամարդ: Բոպեներ անց միջոցառմանը մասնակցող մյուս օպերատիվ խմբի ծառայողները Ռուբինյանց փողոցից նույն կասկածանքով բաժին բերման ենթարկեցին եւս երեք հոգու՝ «ԲՄՎ» ավտոմեքենայով հանդերձ: Երեքն էլ վանաձորցի էին, երկուսը՝ եղբայրներ:

Անձնական խուզարկությամբ եղբայրներից մեկի մոտ հայտնաբերվեց քսան սանտիմետր շեղբով ծալովի դանակ, մյուսի մոտ՝ հափշտակած ոսկյա թեւնոցը:

Հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Բնակիչները բռնեցին գողին

Հունիսի 17-ի լուսադեմին ոստիկանություն է զանգել մի քաղաքացի եւ հայտնել, որ Արցախի փողոցի շենքերից մեկի բակում կայանված մեքենայից գողություն անողին բռնել են:

Դեպքի վայր մեկնած ոստիկանության օպերատիվ խումբը պարզեց, որ քսաներկու տարեկան մի երիտասարդ պտուտակահանով կոտրել էր բակում կայանված «Օպել»-ի հետեւի դռան ապակին եւ փորձել գողություն անել: Սակայն, իր կամքից անկախ, հանցագործությունը ավարտին հասցնել չէր կարողացել. շենքի բնակիչները բռնել էին:

Բաժնում ոստիկանների բացատրական աշխատանքի շնորհիվ երիտասարդը խոստովանեց, որ, բացի նշված գողության փորձից, մեքենաներից կատարել է եւս երկու գողություն:

Կատարվում է քննություն:

Կաշառքի պրովոկացիա

Կաշառքի պրովոկացիան հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու կամ շանտաժի նպատակով պաշտոնատար կամ կազմակերպություններում կառավարման գործառույթներ իրականացնող անձին, առանց նրա համաձայնության, դրամային կամ գույքային բնույթի ծառայություններ մատուցելու փորձն է:

Սա քրեորեն պատժելի արարք է: Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածի համաձայն՝ նման արարք կատարած անձը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ:

Կաշառքի պրովոկացիան ոչ հազվադեպ հանցատեսակ է, ուստի օրենքի վերաբերմունքն ու սահմանած պատիժը ներկայացնելը որոշակի «լուսավորիչ» նպատակ ունի հատկապես նրանց համար, ովքեր երեւույթը որպես հանցանք չեն դիտում:

Իր արարքը որպես հանցանք չէր պատկերացնում նաեւ նախկին պաշտոնյա Մարիամ Հակոբյանը: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները ենթարկվել են բազմակողմանի եւ օբյեկտիվ ստուգման՝ վերլուծվել են, համադրվել այլ ապացույցների հետ, նաեւ ապացույցների ձեռքբերման աղբյուրներն են ստուգվել, յուրաքանչյուր ապացույց ենթարկվել է գնահատման: Այսինքն՝ հետաքննական եւ նախաքննական մարմիններն աշխատել են համակողմանիորեն:

Վաթսունվեցամյա Մարիամ Հակոբյանն իր դիմումի համաձայն 2010 թվականին ազատվել էր աշխատանքից: 2013 թվականի հունվարին տեղեկանալով, որ նախկին աշխատավայրում թափուր տեղերի համար մրցույթ է հայտարարվել, որոշել է վերականգնվել նախկին պաշտոնում: Մրցույթին մասնակցել է, բայց քիչ ձայն հավաքելու պատճառով չի անցել: Եվ որոշել է մարտավարության անցնել: Մտածել է, որ կարող է կաշառել ղեկավարությանը եւ նրանց օժանդակությամբ հաղթահարել մրցույթը: Մտածել ու գործի է անցել:

Երեսուն հատ քսանհազարանոց թղթադրամ դրել է ծրարի մեջ ու գնացել նախկին աշխատավայր: Մտել է կարգադրիչ գործառույթներ իրականացնող ղեկավարի աշխատասենյակ եւ, առանց նրա հետ նախնական պայմանավորվածության կամ համաձայնության, փաթեթը դրել աշխատասեղանին ու հեռացել: Համոզված էր, որ այդ եղանակով նրա օգնությամբ կշահի մրցույթն ու կվերականգնվի նախկին աշխատանքին:

Հաշվարկը, սակայն, սխալ դուրս եկավ. վեց հարյուր հազար դրամով գայթակղվելու փոխարեն պաշտոնյան այդ մասին հայտնեց վերադասին, ապա եւ՝ ոստիկանություն:

Փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է:

Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Վարորդը մեքենայում քնած էր...

Մայիսի 21-ի առավոտյան ոստիկանության Էրեբունու բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ գիշերը Տիգրան Մեծի պողոտայում կայանված իր մեքենայից գողացել են բջջային հեռախոս: Ի դեպ, ինքը ներսում քնած էր:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ: Ոստիկանները սկսեցին ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը բացահայտելու համար:

Ճշտվել էր կասկածյալի ինքնությունը, սակայն մոտ մեկ ամիս նրան հայտնաբերելու միջոցառումները արդյունք չէին տալիս: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներին զուգահեռ իրականացվեց նաեւ բացատրական աշխատանք: Հենց դրա շնորհիվ էլ կասկածյալը ինքնակամ ներկայացավ ոստիկանություն եւ խոստովանեց կատարածը:

Հարուցված քրեական գործի քննությունը շարունակվում է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Գայթակղություն»



Արտերկրում բարձր աշխատավարձով աշխատանքի տեղավորման հայտարարություններն, ինչ խոսք, հրապուրիչ են, բայց հայտարարություն տվողները երբեմն սովորական խարդախներ են, որ փող աշխատելու այդ ճանապարհին են ընտրել: Ինչպես երեւանցի Արամ Ղազարյանը. աշխատանքի տեղավորման նրա հայտարարություն-խայծը կուլ տվեցին երեք եղեգնաձորցիներ:

Ռուսաստանի Դաշնությունում բարձր աշխատավարձով աշխատանքի տեղավորելու մասին հայտարարություններն Արամ Ղազարյանը տեղադրել էր համացանցում: Թե քանիսն էին ուշադրություն դարձրել, կարդացել, հավատացել կամ չհավատացել դրանց, հայտնի չէ, բայց հայտարարությունը հետաքրքրել էր Շիրակի մարզի բնակիչ մի կնոջ, եւ նա գրի էր առել հեռախոսահամարը: Իսկ երբ օրեր անց ամուսինը նեղսրտել էր աշխատանք չունենալու համար, հիշել էր հայտարարության մասին ու հեռախոսահամարը տվել նրան:

Գայթակղիչ առաջարկություն էր, եւ աշխատանք փնտրողն առանց հապաղելու զանգեց:

Վերջապես խայծը կուլ տվող էր հայտնվել. Արամ Ղազարյանը, ձայնին գործնական երանգ տալով, ներկայացրեց առաջարկվող աշխատանքի մանրամասները. աշխատավարձն ամիսը երեքից չորս հազար դոլար է, «ԿամԱԶ» վարելու աշխատանքային պայմանագիրն էլ՝ մեկ տարի ժամկետով: Նաեւ հավելեց՝ եթե այլ ցանկացողներ կան, նրանց էլ թող ասի: Ինքն իբր ինչ-որ գործերով հանրապետությունից դուրս է, կվերադառնա, կհանդիպեն ու ավելի կոնկրետ կխոսեն:

Երկու-երեք օր անց Արամ Ղազարյանը զանգեց, թե՝ վերադարձել եմ, որտե՞ղ կարող ենք հանդիպել: Պայմանավորվեցին: Շիրակցին իր նման երկուսին էլ էր գտել, ու երեքով հանդիպեցին Արամ Ղազարյանին:

Առաջարկվող աշխատանքն արդեն երես առ երես ներկայացնելուց բացի, Ղազարյանն ասաց, որ յուրաքանչյուրը պետք է նախապես հազար դոլար տա՝ որպես միջնորդավարձ ու փաստաթղթային ձեւակերպումների վճար: Պայմանավորվեցին՝ հենց փող ճարեն, կզանգեն:

Օրեր անց, սակայն, զանգեցին ու հրաժարվեցին՝ ասելով, որ կարող են տալ ընդամենը հինգհարյուրական դոլար:

Արամ Ղազարյանը հասկացավ՝ կորցնում է կլորիկ գումարի հույսը, եւ նոր մարտավարության անցավ. համաձայնեց գործը գլուխ բերել այդքանով: Համաձայնությունը կայացավ: Ղազարյանը հաջորդ օրը գնալու էր փողը, անձնագրերն ու վարորդական իրավունքի վկայականները վերցնելու:

Հաջորդ օրը Գյումրիում էր: Տպավորություն ստեղծելու համար հենց այնտեղ էլ գնացին նոտարական գրասենյակ՝ աշխատանքային պայմանագիրը կնքելու: Նոտարը, սակայն, հրաժարվեց գործարքից, որովհետեւ Արամ Ղազարյանի անձնագիրը հնամաշ էր, լուսանկարը՝ պատռված: Ղազարյանը խոստացավ հաջորդ օրն իսկ զբաղվել անձնագրի հարցերով. մի քանի օրից նոր անձնագրով կգար, ու աշխատանքային պայմանագիրը կկնքեին:

Խոստացավ, հազար հինգ հարյուր դոլարը գրպանը դրեց ու վերադարձավ Երեւան: Այդ օրվանից նրա հեռախոսը դարձավ անհասանելի...

Շիրակցիները, սակայն, ոչ միայն դյուրահավատ, այլեւ հնարամիտ էին. լավ տնտղել էին Ղազարյանի անձնագիրը, իսկ նրանցից մեկը նաեւ բջջայինով թաքուն նկարել էր լուսանկարով էջը:

Ոստիկանության աշխատակիցներին, ինչ խոսք, շատ օգնեց այդ հնարամտությունը, բայց Արամ Ղազարյանին հայտնաբերել հաջողվեց երկու տարի տեւած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

Քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) հատկանիշներով հարուցված քրեական գործի վարույթը կասեցվեց հանցագործությունը կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով: Բայց նրան հայտնաբերելու միջոցառումները շարունակվեցին: Եվ, ահա, դեպքից երկու տարի անց Ռուսաստանի Դաշնությունում հանգրվանած Արամ Ղազարյանը հայտնաբերվեց եւ տեղափոխվեց Հայաստան:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Օրջի «բռնակիչները»

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը կամ որեւէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը, կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձեւով նպաստելը քրեորեն հետապնդելի արարք է, ինչի համար պատիժ նախատեսում է քրեական օրենսգրքի 262 հոդվածը: Բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է նաեւ երեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆինքինգը կամ շահագործումը: Այս դեպքում օրենքն առավել խիստ է՝ ընդհուպ մինչեւ տասներկու տարի ժամկետով ազատազրկում՝ կախված հանցագործության հանգամանքներից ու բնույթից:

Այս հանցատեսակներին անդրադարձը պատահական չէ. ոստիկանների բացահայտած հանցագործության գլխավոր «հերոսները» մեղադրվում են քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

Քրեական գործով անցնող մեղադրյալները երեքն են՝ Արմինե Սարգսյան, Գոհար Քոչարյան եւ Հայկ Արամյան:

Գլխավոր դերակատարը Արմինե Սարգսյանն է: Հոդվածների քանակով էլ է նա առաջատար՝ քրեական օրենսգրքի 132.2-ի 1-ին մաս, 262-ի 2-րդ մասի 5-րդ կետ եւ 133-ի 2-րդ մասի 1-ին կետ: Հանցընկերուհու՝ Գոհար Քոչարյանի «բեռը» թեթեւ է՝ 38-132.2 հոդվածի 1-ին մաս:

Հայկ Արամյանը մեղադրվում է պոռնկությանը նպաստելու համար, նախատեսվող պատիժն էլ 262 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով է:

Հիմա այն մասին, թե որ քամիները հանդիպեցրին այս երեքին ու դարձրին «բիզնես-գործընկերներ»:

Սյունիքի մարզի բնակիչ Հայկ Արամյանին հանդիպելուց առաջ Լոռու մարզի բնակչուհի Արմինե Սարգսյանը մի երկու անգամ քրեական օրենսգրքի «համը» տեսել էր՝ 90-ականներին դատապարտվելով հափշտակություններ կատարելու համար: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հայտնվեց մանկահասակ դստեր հետ, մի երեխա էլ այնտեղ ունեցավ: Ազատվելուց հետո զավակներին հանձնեց մանկատուն ու մեկնեց Սյունիքի մարզ: Ծանոթներից մեկն ասել էր՝ իբր մարմնավաճառության «գործն» այնտեղ ձեռնտու է. պարսիկ վարորդներին պետք է սպասարկեր:

Ծանոթացավ Հայկ Արամյանի հետ, ավելի ճիշտ՝ հենց Հայկը դարձավ գործատուն: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն տնօրենը անհրաժեշտ կահավորանքով ավտոտնակը դարձրել էր պոռնկության որջ. Արմինեն, եւ ոչ միայն նա, այնտեղ էր ընդունում «հաճախորդներին»:

Համագործակցությունից գոհ էին: Իսկ հետո Արմինեն հրավիրեց նաեւ ընկերուհուն՝ Գոհար Քոչարյանին:

Արմինե Սարգսյանի ապրած կյանքը մեղքերի խտացում է, բայց գլխավոր մեղքը գործեց անչափահաս դստեր հանդեպ: Մանկատնից դստերը հանեց ու տարավ իր մոտ: Մայրական հոգատարության ու սիրո մեջ պահելու համար չտարավ, այլ՝ որպես «աշխատուժ»:

Անչափահաս դստերը նախ մատուցեց «գործատուին», ու դստեր հաշվին գործատեղում դիրքերն ամրապնդեց, սկսեց իշխել մյուս «սպասարկուներին»: Աղջիկը ժամանակ առ ժամանակ նաեւ «գործուղվում» էր ավտոտնակ՝ պարսիկ «հաճախորդներին» սպասարկելու:

Իրացնելով ստացված օպերատիվ տվյալները՝ ոստիկանները բացահայտեցին Հայկ Արամյանի որջը: Նախապատրաստված նյութերով իրականացված հետաքննությամբ հիմնավորվեց հանցավոր խմբի գործունեությունը:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Օպերատիվ

Չհրկիզվող պահարանների «հերացիչը»

Հունիսի 24-ին, ժամերի տարբերությամբ, ոստիկանության Կենտրոնական բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից գողության վերաբերյալ երկու ահազանգ ստացվեց:

Մի դեպքը Զաքիյան փողոցում էր կատարվել: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին արագ սննդի կետի դուռը, հափշտակել հեռուստացույց ու չհրկիզվող պահարան, որի մեջ փող կար: Մյուս գողությունը Մաշտոցի պողոտայի գեղեցկության սրահից էր: Դարձյալ չհրկիզվող պահարան էին հափշտակել, որի մեջ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կնիքն էր:

Հետաքննություն իրականացնող մարմինը հափշտակելու կությունները բացահայտելու ուղղությամբ ձեռնարկեց օրենքով նախատեսված միջոցառումներ: Ձեռագիրը նույնն էր: Եվ համալիր որոնողական աշխատանքների արդյունքում, հաղորդումներից մեկ օր անց քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ նշված գողությունները հնարավոր է կատարած լինի Փարպեցու փողոցի քսանմեկամյա մի բնակիչ:

Հաջորդ օրը կասկածվողը Փարպեցու փողոցից բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին եւ տվեց խոստովանական ցուցմունք:

Հանգամանքները եւ վնասի չափը պարզվում են:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությունը շարունակվում է:

«Նանեխագործները»

Հունիսի 14-ին ոստիկանության Կումայրիի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Գյումրիի Հ. Սարգսյան փողոցի բնակիչ Համլետ Պ.-ն տանն ապօրինի կանեփ է աճեցնում:

Քրեական հետախույզները տան բակում կատարած զննությամբ հայտնաբերեցին 85 հատ, 3 կգ ընդհանուր կշռով կանեփի ցողուններ:

Համլետ Պ.-ն հայտարարել է, որ հայտնաբերված կանեփի մի մասը մշակել է անձամբ, մի մասն էլ վայրի աճած ցողուններ են, որոնք քաղել է օգտագործելու համար:

Նույն օրը ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու մի դեպք էլ արձանագրել են ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները:

Ժամը 21.00-ի սահմաններում օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում է ստացվել, որ Երեւանի Հույսի ավան 5-րդ փողոցի տներից մեկում կանեփ են աճեցրել: Մեկնած օպերատիվ խմբին նշված տան բնակիչ Գեւորգ Հ.-ն ներկայացրել է երկու պլաստիկ տարա՝ յուրաքանչյուրի մեջ աճեցված կանեփի 5 բույս:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Բացահայտում են Գուգարքի ոստիկանները

Ոստիկանության Գուգարքի բաժին դիմած Լեռնապատ գյուղում ապրող կինը հայտնում էր, որ նախկին ամուսինը գյուղի հանդամասից գողացել է իր կովը:

Գուգարքի ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում հափշտակված կովը հայտնաբերվեց տուժողի նախկին ամուսնու առանձնատան բակում: 49-ամյա տղամարդը ոստիկանությունում խոստովանական բացատրություն տվեց:

Հունիսի 17-ին ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները արձանագրեցին գողության մի բացահայտում եւս:

Ժամը 19.30-ի սահմաններում քրեական հետախույզների ստացած օպերատիվ տեղեկությունների հիման վրա բաժին հրավիրվեց Վանաձորի բնակիչ, 25-ամյա մի տղամարդ: Նա խոստովանական բացատրություն տվեց, որ օրեր առաջ Դարպաս գյուղի տարածքի շշերի արտադրամասի մոտից գողացել է էլեկտրական երկու շարժիչ: Գողոնն իրացրել էր գունավոր մետաղների ընդունման կետում:

Ձեռնարկված միջոցառումներով գողոնը հայտնաբերվեց: Բաժին հրավիրվեց տուժողն ու հաղորդում տվեց:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«... Իզմայլովա» (Շոստ.) — Աբական — Կամիթային նվագարան — Բուլղար գրող («Ծխախոտ») — Քըրք, Մայքլ ... — Մարզիկ — Հույն քանդակագործ — Օրվա մաս — Բանջար — Կարմիր — Աթլետիկ գործիք

Կոնֆետ — Իտալացի տենոր — Ռուս միապետ — ... Օբրազցովա — Ոչ անալի — «Ես եւ ...»

Հնդկական, աֆրիկյան ... — Բարի լուր — Գերման. քաղաք — Գլխ..., ողն... — Թանկարժեք քար

Տարիքն առած — Բանջարանոցի պտուղ — Շիրվանզադե, վեպ — ... Ռեմո — Նոտա — Հռոմեացի փիլ. եւ գրող

Կենդանու ոտքի մաս — Ցերեկը գործում էր, գիշերը քանդում — ... Դեպարդիե — Ժողով — «Ոսկե ...ը» — Նժույգ — Համաստեղություն

Տեղի, ժամանակի ... — Նիկոլո ... — Մուտք — Ցվայգ, նովել

Չայկովսկի, օպերա — Գետ, Միջին Ասիա

Հայկ. ֆուտ. ակումբ — Անգլ. փիլիսոփա

Սպաս — Ռուս կինոռեժիսոր — Քվենտին ...

Եղրեւանի — Վենետիկի ոսկեդրամ — Գինի — Հովիվ — Նետերի տուփ — Անցյալ, ներկա — Բիբ — ... Օռլեան

Միրգ — Խմելու ջուր — Մետաղ — Լեռ — Ռազմանավ — Շորի կտոր — Դեպք — Մխիթար ...

Վարս — Ժամանակի միավոր — Մողեսի տեսակ

Արձակագիր — Մաժոր — Երկնոլորտի կետ — Ֆրանս. նկարիչ — Ժամերգություն — ... Գասպարյան

Իլյուշին — Մայր ... — ... Տերտերյան — Կառավարիչ — Մշակվող հողամաս — Խորհրդ. բեռնատար

Վանք, Արցախ — Հեռախոս — ... Գեղեցիկ — Զվարթնոց — Կորիզապտուղ — Դատարանում ցուցմունք տվող — Հադես — Նախամայր

Ավտոմեքենայի մաս — Նավի հետնամասը

Հաստ մահակ — Իշամեղու — Դերձակ — Արեւադարձային բույս — Գյուղատնտ. աշխատանք — Ֆրանս. մաթեմատիկ. — Հյուսնի գործիք

Այծյամ — Լատվիա — Իտալ. ճարտարապետ — ... Երկաթ — Գետ, Ռուսաստան — Մորմ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 12.07 - 18.07

Խոյ - Ուժերի վերելքի, ուշադրությունը սեփական անձին հրավիրելու շրջան է: Կարող են խնդիրներ ծագել ծրագրերն իրականացնելիս:

Ցուլ - Աջակցության բացակայությունը հետ կպահի որոշ ծրագրերից: Աշխատավայրում կցուցաբերեք անհարկի սկզբունքայնություն:

Երկվորյակ - Հանդիպումներ կարեւոր մարդկանց հետ: Դրամական գործերի հաջող ընթացք, սառնություն՝ ընտանեկան հարաբերություններում:

Խեցգետին - Նյութական վիճակը բարելավելու ձգտում: Խնդիրներ՝ ընկերների հետ գործերում: Ուղեւորությունների ժամանակ զգույշ եղեք:

Առյուծ - Դիրքի ամրապնդում մի շարք ոլորտներում: Կմասնակցեք հետաքրքիր միջոցառումների:

Կույս - Ընտանիքում հնարավոր է լարվածություն եւ վեճ: Շրջապատի կողմից բարյացակամ վերաբերմունքի կարժանանաք:

Կշեռք - Դժվարություններ՝ գործնական հարաբերություններում. ֆինանսների հետ կապված տարածայնություններ կունենաք:

Կարիճ - Նոր գիտելիքներ ստանալու ցանկություն կառաջանա: Կարգապահության պակասը վատ կանդրադառնա աշխատանքի վրա:

Աղեղնավոր - Ինքնադրսեւորվելու ձգտումը կարող է վատ անդրադառնալ աշխատանքային առաջընթացին: Կմասնակցեք զանգվածային միջոցառումների:

Այծեղջյուր - Կազմակերպությունների կամ արտասահմանի հետ կապված գործերի ձգձգում:

Ջրհոս - Անսպասելի հանդիպումները, ընկերների օգնությունը կնպաստեն իրականացնելու ցանկալին: Հնարավոր են հակասություններ ղեկավարության հետ:

Ձուկ - Ստիպված կլինեք շատ աշխատել գործերն ավարտին հասցնելու համար: Զգացմունքայնությունը կարող է խանգարել աշխատանքին:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.c7-d8 a3:e7 2. d8:h4:a1x

Խնդիր N2 1. c7-d8 f4:d2 2. h2-g3 h4:f2 3. d8:a1x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 11.07.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: